թշնամեաց փոխեսցի, եթէ ոչ 'ի ժամանակ խոսելոյ խաղաղութեան ըստ արժանւոյ որքանութեան գերեցելոյ հարկադրեսցի թշնամւոյն հատուցանել փոխանակ գերեցելոց մերոց այն որ արժան իցէ, և յետ հաստատելոյ խաղաղութեան ամենայն գերեցեալ ազատ լինի կալ և ելանել, ըստ նմանութեան դաշնադրութեան խաղաղականի։

ԳԼՈՒԽ ՅԺԶ.

Ամենայն կարգաւոր և իշխան գերի եթէ երդմամբ և ձեռնադրեալ թղթիւ խոստանասցէ որ 'ի բոլոր ժամանակ այնմ պատերազմի որում ինքն գերեցաւ մինչև 'ի ժամ խաղաղութեան հաստատելոյ, ոչ ձեռս 'ի վեր մի կալցի ընդ դէմ հայոց զօրաց, և որում ժամու հրաւիրեսցի գերեցողն իւր իսկոյն հնազանդեալ եկեսցի և ընդունեսցի կեանս գերութեան իւրոյ նմայ տացի թուղթ ազատութեան շրջելոյ 'ի յերեսս երկրի 'ի տեղի որում գերի առնողն խոստանայցէ նմայ, և նա ելցէ և սպասիցէ 'ի ժամանակի խաղաղութեան, յետ խաղաղութեան ընթանասցէ ըստ համեմատութեան դաշնոյ խաղաղութեան։

ԳԼՈՒԽ ՅԺԷ.

Ծախ կերակրոյ, զգեստի, դարմանի և այլն գերելոց ամենայն ամսի պարտ է տէրութիւն